



ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ՝ «ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը հայտարարում է «Բարությունը Հայաստանում» խորագրով լուսանկարչական մրցույթ:

Բարությունը մարդկանց համատեղ կյանքի կարևորագույն տարրերից է, առանց որի դժվար է պատկերացնել սոցիալական որևէ նպաստավոր միջավայր: Որտեղ իշխում է բարությունը, այնտեղ բռնությունը պարտված է: Մենք հավատում ենք, որ բարությունը մեծ տեղ ունի Հայաստանում. եկեք այն ցույց տանք:

Մրցույթի պայմանները

- Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները՝ առանց տարիքային սահմանափակման
- Յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացնել մինչև 3 լուսանկար
- Լուսանկարները, ինչպես բխում է մրցույթի վերնագրից, պետք է արված լինեն Հայաստանում
- Մասնակիցները¹ երաշխավորում են, որ լուսանկարը նախկինում տպագրված չի եղել կամ հրապարակված չի եղել օնլայն տիրույթում (կայքեր, սոցիալական մեդիա):
- Մասնակիցները երաշխավորում են, որ իրենք են հանդիսանում ներկայացված լուսանկարների հեղինակները: Հեղինակային իրավունքների խախտում հայտնաբերելու դեպքում մասնակիցը կորակագրվի:
- Ներկայացվող լուսանկարները պետք է լինեն առնվազն 1680x1320 չափի և .jpg ձևաչափի: Ընտրված լուսանկարների համար, հնարավոր է, հեղինակներից խնդրենք ներկայացված լուսանկարների առավելագույն որակով նմուշները:
- Լուսանկարները կարող են ենթարկված լինել միայն նվազագույն մշակման (crop, թեթև լուսային, կոնտրաստային մշակում)
- Լուսանկարներն անհրաժեշտ է ուղարկել manukyan@unfpa.org էլեկտրոնային հասցեին՝ նամակի վերնագրում (subject) նշելով «Բարությունը Հայաստանում»: Նամակում անհրաժեշտ է նշել.
 - Հեղինակի անունը, ազգանունը
 - Տարիքը
 - Բնակավայրը
 - Հեռախոսահամարը
 - Լուսանկարի կատարման վայրը

Ժյուրին

¹ Անչափահասների դեպքում՝ նրանց ծնողները կամ օրինական խնամակալները:

Հաղթողներին որոշելու է գնահատող հանձնաժողովը, որի կազմում են հանրահայտ լուսանկարիչներ Զավեն Խաչիկյանը, Սամվել Սևադան և Սուրեն Մանվելյանը, ինչպես նաև ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցիչ:

Գնահատման չափանիշները

Ժյուրին լուսանկարները գնահատելու է երկու չափանիշով՝ բովանդակություն և կատարում:

Մրցանակները

- Առաջին տեղի համար՝ Samsung Galaxy A5 սմարթֆոն
- Երկրորդ տեղի համար՝ Lenovo IdeaPad լեփթոփ
- Երրորդ տեղի համար՝ Lenovo Yoga Tab3 պլանշետ

Մրցանակները կհանձնվեն «Ընդդեմ գենդերային բռնության 16-օրյակ» 2017 թ. քարոզարշավի շրջանակներում, որն ավանդաբար մեկնարկում է նոյեմբերի 25-ին և ավարտվում դեկտեմբերի 10-ին:

Վերջնաժամկետը

- Լուսանկարների ներկայացման վերջնաժամկետն է ս.թ. նոյեմբերի 30-ը, ժամը 17:00: Վերջնաժամկետից հետո ներկայացված լուսանկարները չեն դիտարկվելու: